

ՀԱՍԱՆ ԶԱԼԱԼԻ ԿԻՆ ՄԱՄՔԱՆԸ ԴՈՒՍՏՐԻՆ ԷՐ ԴՍԵՂԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԱՍԼԱՆԲԵԿԻ

Ալեքսան Յակոբեան

Երջանկայիչատակ Բագրատ Ուլուբաբեանը ինչպես իշխանութեանը նուիրուած իր հիմնարար աշխատութեան առանձին ենթագլխում անդրադառնալով երկրամասի «Մշակութային ու շինարարական գործի վերելքին»՝ շարադրանքն սկսում է խիստ բնութագրական խօսքերով. «Հասան-Ջալալի կենսագրութեան նշանակալից մասն է կազմում իր շինարարական գործունէութիւնը՝ ծաւալուած հայրենի ինչպէս նաեւ ինչպէս սահմաններից դուրս՝ Հաղբատում ու Կեչառիսում: Ամենուր նրա հետ է կիներ՝ բարեպաշտուհի Մամքանը, որն ինչպէս ամուսնու հետ, այնպէս էլ նրանից զատ՝ ե՛լ որդի Աթաբակի հետ, ե՛լ միայնակ, եկեղեցիներ է նորոգում ու կառուցում, խաչքարեր է կանգնեցնում, օժանդակում մատենաներ ստեղծելուն, ապա նուիրում է հայրենի վանքերին»¹ (ընդգծումը մերն է – Ա. Յ.):

2010 թ. «Հանդէս ամսօրեայում» մեր հրատարակած ընդարձակ յօդուածում, որի խնդիրը ինչպէս իշխանատոհմի ծագումնաբանութեան ճշգրտումներն էին², առիթ ունեցանք լուծելու բազմաթիւ բարդ եւ առանցքային պատմագիտական խնդիրներ: Դրանցից յատկապէս կարեւոր էր Գանձասարի տաճարը կառուցած Հասան Զալալ Դօլա իշխանի պապի՝ Հասան Կրօնաւորեալի մասին դեռեւս Մարի Բրոսէի եւ

Մակար Բարխուդարեանցի, մասամբ նաեւ՝ Յովսէփ Օրբէլու մեկնաբանութեան իրաւացիութեան հաստատումը³: Մանրակրկիտ քննութեամբ եւ նոր ընդգրկուած աղբիւրագիտական նիւթի լրացուցիչ փաստերով մեզ, թւում է, թէ յաջողուցի վերջնականապէս հաստատել, որ Հասան Կրօնաւորեալը, ով նաեւ նոյն ինքը՝ Բաղք-Սիւնիքի վերջին թագաւոր Հասան Գեռաքարեցին է⁴, ամուսնացած է եղել երկիցս, ընդ որում՝ երկու դէպքում էլ անդրանիկ որդիներին անուանել է իր հօր անունով՝ Վախտանգ (Վախտանգ Թանգիկ, կինը՝ Սարգիս ամիրսպասալարի դուստր Խորիչահ, եւ Վախտանգ Հաթերքցի, կինը՝ Քուրդ իշխանաց իշխանի դուստր Արզուխաթուն), այդպէս լուրջ «չփոթութեան մէջ գցելով» յետագայ շատ հետազօտողները⁵: Ինչպէս նախկինում էլ նշել էինք, այս դիտարկումը ժամանակին փորձել էր մերժել (եւ խիստ անյաջող հիմքերով) դեռեւս Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանը⁶: Բայց ուշագրաւ է, որ, անկախ մասնագիտական գրականութեան ճնշող աւանդոյթից, այն ան-

1 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում*, Եր., 1975, էջ 176:

2 Ա. Յակոբեան, *Խաչեն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում*, – «Հանդէս Ամսօրեայ», ԾԻԴ տարի, Վիեննա-Եր., 2010, ս. 71-170:

3 M. Brosset, *Histoire de la Sioumie par Stéphannos Orbélian*, T. II, S.-Petersbourg, 1866, p. 158; Մ. եպ. Բարխուտարեանց, *Պատմութիւն Աղուանից*, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 140. И. Орбели, *Асан Джалал, князь Хаченский*, – И. Орбели, *Избранные труды*, Ер., 1963, с. 146-147.

4 Այս կարեւոր ճշտման մասին տե՛ս դեռ Բ. Ուլուբաբեան, *Գանձասար*, Եր., 1981, էջ 155:

5 Մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, *Խաչեն-Խօխանաբերդ ամրոցը*, ս. 109-124:

6 Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, *Դօլիեանք եւ Մեյիք-Շահնազարեանք*, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1914, էջ 49-52:

վերապահորէն ընդունուել է Կիրիլ Թու-
մանովի կողմից⁷:

Ինչպէս նշեցինք, Հէնց Հասան Կրօ-
նաւորեալն էր եղել Բաղք-Սիւնիքի վերջին
Թագաւորն ու իր նախորդի՝ Բաղաց նախա-
վերջին՝ Գրիգոր Բ Թագաւորի «միակ»
դուստր Կատայի ամուսինը: Ստեփաննոս
Օրբէլեան պատմիչի խօսքերն են. «Գրի-
գորն, որ իշխէր Բաղաց, ետ ածել ի Խաչն-
նոյ իշխանացն մանուկ մի՝ Հասան անուն,
ի Գեռաքարեցեացն, եւ ետ զդուստր իւր
Կատայն նմա ի կնուութիւն եւ կացոյց ժա-
ռանգ Թագաւորութեան իւրոյ»: Երբ իր ա-
նրն ու նրա Սմբատ եղբայրը նոյն տա-
րում վախճանուեցին, Հասանը 4 տարի ե-
ղաւ Սիւնեաց վերջին Թագաւորը, իսկ Բա-
ղաբերդ արքայանիստի անկման նախօ-
րէին ընտանիքով մազապուրծ հեռացաւ
«ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն [var.
Խաչէնք]»: ⁸: Հէնց սրա հետեւանքով է, որ
նրա առաջնեկ Վախտանգ Թանգիկի որ-
դին՝ Հասան Զալալը մի քանի վիճազրե-
րում կոչուել է «Թոռն Բաղաց Թագաւո-
րի»: Ճիշտ է, նախորդ տարիների շատ աշ-
խատանքներում այդ անուանումը շտա-
պողաբար վերագրուել է Հասան Զալալի
կնոջը՝ Մամքանին, եւ մեր վերջնական
ճշգրտումից յետոյ հարկ է նաեւ ճշտել
վերջինիս իսկական տոհմաբանութիւնը:

Մամքանի տոհմի մասին Յովսէփ Օր-
բէլին հետեւել է Ռ. Երզնկեանցի տեսակէ-
տին, ով իբրեւ թէ Հաղբատում տեսել էր
մեր իշխանուհու անթոռական տապանա-
գիրն՝ այսպիսի մի արձանագրութեամբ.
«Մամքան Շուշանիկն է, քոյր Զարեհ իշ-

խանին Հաղբատայ, Թոռն Բաղաց Թագա-
ւորի, կին Զալալ իշխանին Խաչենայ»⁹: Ի-
րաւացիորէն մերժելով այդ տեսակէտը՝ Բ.
Ուլուբաբեանը նկատում է, որ «յետագայ
ուսումնասիրողներից ոչ ոք այս արձանա-
գրութիւնը չի տեսել: Դեռ աւելին. չի տե-
սել որեւէ արձանագրութիւն, որի մէջ լի-
նէր «Շուշանիկ» կամ «Զարեհ» անուն:
Զարեհ անունով իշխան չի յիշում այս ժա-
մանակներին վերաբերող ոչ մի աղբիւր»¹⁰:

Հր. Աճառեանի «Անճնանունների բա-
ռարանում» կան խիստ խառնակ տեղե-
կոյթներով հետեւեալ բառայօդուածները.

«6. Մամքան, դուստր պարոն Ասլանի.
Խաչենի մեծ իշխան Հասան-Զալալ-Դոլայի
մերձաւոր ազգականներից. յիշուած է 1249
թ. – Արցախ 188 = Արրտ. 1896, 234»:

«10. Մամքան Թագուհի, դուստր Կիւ-
րիկէ Գ-ի (որ կոչուել է նաեւ Բաղաց Թա-
գաւոր), քոյր Ռուզուբանի, Մարիամի եւ
Աբաս Բ Թագաւորի Կիւրիկեանց. կին Հա-
սան-Զալալ-Դոլա իշխանի Խաչենի, մայր
Վասակ պատրոնիկի. իր ամուսնու հետ
միասին նորոգել են Կեչառուաց վանքը
1248 թ., շինել է Վաճառի եկեղեցիները
1251 թ., Գանձասարի նորաշէն եկեղեցու
գաւիթը: Մեռել է 1260 թ.: - Կիր. իթ. Justi
189ա. յիշատ. ИАН 1909, 425. Արձ. Այրա-
րատ 262, Սմբատեանց՝ Գեղարք. 352 (եր-
կու Արձ). Շահխաթ. Բ. 194, 371-3, 377-8
եւ Արցախ 173 (Գանձասարի 1240 թուի
մեծ Արձ.), 174, 175, 182, 184. յիշուած է
նաեւ 1163 թուի Արձանագրութեան մէջ՝
Մովսէսեան, Լուրի թղ. 69-70»¹¹:

7 C. Toumanoff, *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasia chrétienne* (Arménie-Georgie-Albanie), Roma, 1976, p. 238.

8 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիւսկան, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկուա, 1861, գլ. 4, էջ 247; Պատմութիւն անհանգիստ Սիւսկան. Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, գլ. 4Ա, էջ 337:

9 Ռ. Երզնկեանց, *Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ Սուրբ Նշանի*, Վաղարշապատ, 1886, էջ 54: Հմմ. И. Орбелин, *Асан Джалал, князь Хаченский*, с. 151; Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը*, էջ 209:

10 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանութիւնը*, էջ 209:

11 Հ. Աճառեան, *Հայոց անճանաչման պատմութիւն*, հտ. Գ, Եր., 1946, էջ 188 (բառայօդուածի սկզբում էջ 187. *ՄԱՄՔԱՆ, իգ[ական] < մամ

Բ. Ուլուբաբեանն արդէն իրաւացիօրէն նկատել է, որ «Այստեղ իրար հետ շփոթուած են Բաղայ թագաւորն ու Բագրատունի Կիւրիկէն, Հասան-Ջալալն ու Հաթերքի տէր (անպայման Հասան-Ջալալի տոհմակից) Հասան իշխանը եւ Հասան-Ջալալի կին Մամքանն ու Հաթերքի Հասանի կին Մաման»¹²: Սակայն, ցաւօք, նա եւս վրիպել է Մամքան իշխանուհուն տոհմի ճշտման խնդրում՝ շտապողաբար գրելով. «Ինքը՝ Մամքանն իր արձանագրութիւններում իրեն կոչում էր «գուստր Բաղայ թագաւորին» [ծնթ. 119. Նա այդպէս է կոչուած նաեւ Գանձասարի գաւթի շինարարութեանը վերաբերող արձանագրութեան մէջ («Արցախ», էջ 175)], նաեւ՝ «Ես Մամքան թագուհի՝ ամուսին Ջալալ Դաւիթն եւ թոռն Բաղայ թագաւորին, այսինքն՝ Սիւնեաց» [յղումը՝ («Արցախ», էջ 184)]¹³ (չհիմնաւորուած պնդումների ընդգծումները մերն են — Ա. Յ.):

Իրականում, Գանձասարի նշանաւոր կառուցող Հասան Ջալալ Դօլա իշխանի կին Մամքանն, ամենայն հաւանականութեամբ, եղել է գուստրը Դսեղի Մամիկոնեան-Համազասպեանների իշխանատոհմից Ասլանբէկի (կամ Ասլանի), ինչպէս որ նկատուած է դեռեւս Հր. Աճառեանի կողմից իր «Անձնանունների բառարանի»՝ վերը բերուած թիւ «6» բառայօդուածում (թէկուզ եւ՝ խառնակ տեղեկատուութեան հետ մէկընդմէջ): Դա պարզ երեւում է

վերջերս մեր կողմից վերստին ընթերցուած՝ Գանձասարից 5 կմ արեւելք գտնուող Վաճառ գիւղատեղիի Ս. Ստեփաննոս եկեղեցու միակ հարաւային մուտքի արեւելեան կողի քարերից մէկի վրայ 13 կարճ տողերով գրուած մի ոչ մեծ եւ, ցաւօք, անթուակիր վիմագրից¹⁴, որտեղ ասուած է. «Ես՝ Ասլան / ուր / Մամաք / տվաք : Դ: Հա/մադկի տեղ / ի Մ^{սք} Ըստեփան/ոս. ի տարումն : Բ: / աւր ժամ սպասաւ/որքս տվին: Ա/րդ, ուր / ժամս խ/ափանէ կամ զհ/ողս խլէ՝ դա/տի Ա^{սան} եւ ամե/նայն մ'բոց»¹⁵: Եթէ մեր ենթադրութիւնը ճիշտ է, ապա բնագրում յիշատակուած Մամաքը, ում անուան այդպիսի ձեւն, ամենայն հաւանականութեամբ, նոյն Մամքան-ի լոկ մի տարբերակն է¹⁶, եղել է գուստրը Դսեղի Ասլանբէկ Մամիկոնեանի, ով ինչպէս այստեղ, այնպէս էլ Լօռու վիմագրերից մի քանիսում հանդէս է գալիս Ասլան անուանաձեւով: Նա Լօռու Մամիկոնեան-Համազասպեան յայտնի իշխան Սարգսի ու նրա

բառից. քան վերջաւորութեան համար հմնտ. Պապքան, Գուրքան, Ռուզուրան: Նոյնանում է Մամա անուան հետ. օր. Կիրիկէ Գ թագաւորի աղջիկը կոչում է Մամա կամ Մամքան»:

12 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 210: Հեղինակը նաեւ նշել է, որ Հր. Աճառեանի պատկերը մեծապէս գալիս են Ղ. Մովսէսեանի աշխատանքից (տե՛ս Հ. Ղ. Մովսէսեան, *Լօռիի Կիրիկեան թագաւորներու պատմութիւնը*, Վիեննա, 1923, էջ 69-71, եւ գրքին կցուած տոհմագանկը):

13 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 210:

14 Հմն. Մ. եպ. Բարխուտարեանց, *Արցախ*, Բագու, 1895, էջ 188; *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ V, Արցախ, Կազմեց Ս. Գ. Բարխուտարեան, Եր., 1982, էջ 79, հ^տ 237, լուսանկար 73 (տախտակ XXI):

15 Տե՛ս Ա. Յակոբեան, *Խաչէնի վիմագրերի Յովսէփ Օրբէլու վերծանութիւնները. մէկ դար անց*, – Միջազգային գիտաժողով՝ Աուիրում ակադ. Յովսէփ Օրբէլու ծննդեան 125 ամեակին (Երեւան – Ծաղկաձոր, 13-16 Հոկտեմբերի, 2012 թ.), Զեկուցումների դրոյթներ, Եր., 2012, էջ 83-84: Մեր ընթերցումը կատարել ենք հնագէտ Գազիկ Սարգսեանի կողմից վերջերս արուած եւ մեզ տրամադրուած լուսանկարից (որի համար հետազօտողին յայտնում ենք մեր խոր երախտագիտութիւնը): Այստեղ եւ ստորեւ բնագրերի բոլոր ընդգծումները մերն են:

16 Մամաք անուան մասին Հր. Աճառեանի ուշագրաւ ծանօթագրումն է. «*ՄԱՄԱՔ, իգ[ալկան]. Ծագումը տե՛ս Մամա. Յիշատակուած է ԺԳ-ԺԴ դարերում: Նոյնանում է Մամա անուան հետ. օր. Պոռ իշխանի մայրը կոչուած է Մամա կամ Մամաք (Խաղբակեանք 98), ինչպէս ունինք Պապ, Պապաք, Պապքան» (Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, էջ 182):

առաջին կին Սթէի որդի Մարծպան Բ-ի առաջնեկն էր (կինը՝ Մլ.քան): Ասլանբէկ Մամիկոնեանի մասին (որի եղբայրներից Գրիգոր Բ-ն աւելի է յայտնի Դսեղի եւ այլ վիմագրերից, ըստ ամենայնի՝ իշխանատոհմի աւագութիւնը շարունակած լինելու պատճառով), Հր. Աճառեանի անսխալ ամփոփումն է. «1. Ասլանպէկ Մամիկոնեան, որդի Մարզպանի, եղբայր Գրիգոր իշխանի, Սարգսի եւ Ամիրայի. – սեռ. Ասլանպէկին՝ Կիր. 1, ծգ: Շինել է Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգոր եկեղեցին, 1245 թ. – Յովսեփեան, *Խաղբակեանք 178*» (նոյն բառայողուածի սկզբում կարդում ենք. «*ԱՍԼԱՆԲԵԿ, ար[ական] – <նախորդ Ասլան անունից +բէգ», եւ նախորդի՝ «*ԱՍԼԱՆ, իգ[ական] եւ ար[ական] <թրք. aslan «առիւծ» բառից, որի հին ձեւն է arslan. Համտ. Արի-ասլան «քաջ առիւծ» սելճուքեան թուրք աշխարհակալը (1063-1073): Երեք անգամ գործածուած է իբրեւ իգական, միւսները արական են՝ սկսած ԺԳ դարի սկզբից եւ մինչեւ այժմ էլ գործածական է: Հին ձեւը ունինք Արսլան՝ շատ ուշ՝ 1644 թուին (Չեռ. Սեբ. = ՀԱ 1927, 310): Սրանից է Ասլանեան ազգանունը»¹⁷:

Կարծում ենք՝ անսովոր չի կարող Համարուել այն, որ, ըստ Վաճառի վերը բերուած վիմագրի՝ իշխանագուն Հայր Աս-

լան(բէկ) Մամիկոնեանն ուղեկցում էր իր, ըստ ամենայնի՝ Հարսնացու բերուած Մամքան դստերն ու նրա հետ միասին նուիրատուութիւններ թողնում իր փեսայի երկրի՝ Խաչէնի վանքերում: Մամքանը, թերեւս, Ասլանբէկի միակ գաւակն էր, յամենայն դէպս՝ Լօռու եւ այլ վիմագրերում (որտեղ յիշատակում են իշխանի կրտսեր եղբայր Գրիգորի որդիներն ու դուստրերը) նրա ուրիշ գաւակների մասին տեղեկութիւններ չկան: Ճիշտ է, այդպիսիք չկան նաեւ Մամքանի մասին, եւ դրանից կարելի է ենթադրաբար եզրակացնել, որ վերջինս Հարսնացու է տարուել բաւականին վաղ Հասակում:

Ինչ վերաբերում է Մամքանին Սիւնեաց ծագում վերագրելուն, ապա դա կապուած է մի քանի վիմագրերում նրա ամուսին Հասան Զալալին «թոռն Բաղաց թագաւորին» բանաձեւով կոչող բնագրերի թիւը ընկալման հետ, որն էլ գալիս է այդ բնագրերում ներկայացուած իրօք բաւականին խառնակ շարադասութիւնից: Օրինակ՝ Գանձասարի գաւթի մէջ, տաճարի արեւմտեան պատին ունենք. «...Ես՝ Զալալ / Դաւալայ, որդի Վախտանգա[յ], կողմնակալ Ա/րցախայ, եւ ամուսին իմ Մամքան, թոռն Բաղուց / թագաւորին, եւ Հարազատ որդին իմ Աթաբակ Իւա/նէ...»¹⁸: Իսկ Վաճառի Ս. Ստեփաննոսի եկեղեցուն կից նոյն նահատակի դամբարանի վրայ Մամքանի կառուցած մատուռի մուտքի երկու սրբատաշ քարերին իշխանուհին 7 տողով արձանագրել է. «Ես՝ Մամքան, ամուսին Զալալ Դաւալին, թոռ[ու]ն¹⁹ Բաղ/աց թագաւոր[ին], շինեցի գեկեղեցիս եւ տվի :Ա: լծո[յ] Հող / եւ այգի՝ զիմ այգոյն պտուղն: Սպասաւորքս :Ե: / պատարագ առնեն, ինչ մեռանիմ՝ ինձ: Ով ոք որ տու/ածս Հանէ կամ գժամն խափանէ՝ / դատի յԱ^{ստուծոյ} յ եւ

17 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ա, Եր., 1942, էջ 225: Ասլանբէկ Մամիկոնեանի ու նրա տոհմի մասին մանրամասն տե՛ս Աստ. Գ. Սարգսեան, *Բարձրաքաշ վանքը եւ նրա վիմագրությունը*, – «Էջմիածին», 1951, ԹԺ, էջ 45, ԲՊ 14, ԺԱ-ԺԲ, էջ 45, ԲՊ 18, էջ 51, ԲՊ 40, 42: Դիւան հայ վիմագրություն, պր. VI, Իջեւանի շրջան, Կազմեցին Ս. Ա. Աւագեան, Հ. Մ. Զանփոլաղեան, Եր., 1977, էջ 85, ԲՊ 177: Յ. Քիրտեան, *Դսեղի կամ Համազասպեան Մամիկոնեաններու տունը*, – «Սիրո», 1970, թիւ 3-4, էջ 171, 174, 176-177: Հմմ. Առնի՝ *Նամակ խմբագրությունը*, – ԼՀԳ, 1971, ԲՊ 5, էջ 94-95: Ա. Յակոբեան, *Խաչէն-Խոխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը*, սճ. 161-166: Cl. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, T. II, Paris, 2012, p. 301.

18 Դիւան հայ վիմագրություն, պր. V, էջ 40-41, ԲՊ 83:

19 Վերականգնումը մերն է:

ի սրբոց: ԹՎ[ին] :Չ: [=1251 թ.]»²⁰: Պարզ է, որ այս վիմագրերում «Թոռն Բաղաց թագաւորին» բանաձեւով կոչուած է Հասան Ջալալը, բայց շարադասութիւնը տարաբախտաբար այնպիսին է, որ յիշուի շփոթեցնում է ընթերցողին եւ միտքը ճիշտ է հասկացում միայն կը որ փակագծերի յաւելումով. օր.՝ «ես՝ Ջալալ Դաւայա՝ որդի Վախտանգայ, կողմնակալ Արցախայ, (եւ ամուսին իմ Մամքան), Թոռն Բաղուց թագաւորին...»:

Էլ աւելի շփոթեցնող է Կեչառիսի վիմագրի «դուստր Բաղաց թագաւորին» արտայայտութիւնը, որը պէտք է թուագրել Հասան Ջալալի իշխանանիստ՝ մոնղոլների կողմից կործանուած Խօխանաբերդ ամրոցաւանի վերջին յիշատակութիւնից անմիջապէս առաջ: Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Խօխանաբերդը հիմնայատակ աւերուել է մոնղոլների կողմից դեռեւս Հասան Ջալալ իշխանի կենդանութեան օրօք, եւ գրականութեան մէջ աւանդաբար ընդունուած է թուագրել դա մօտաւորապէս 1246-1247 թթ. (Յ. Օրբէլի, Բ. Ուլուբաբեան եւ ուրիշներ)²¹: Ըստ պատմիչի տեղեկութեան՝ Բուղա հարկահանի գլխաւորած մոնղոլական զօրախումբը «քակեաց զանմարտնչելի բերդս նորա, զոր Խոյախանայ բերդ կոչէին, ըստ պարսկական բարբառոյն, եւ զԴեղն, եւ զԾիրանաքարն, եւ զայլ ամրոցս նորուն: Եւ այնպէս յատակեաց զնոսա, մինչեւ հետք անգամ ոչ երեւէին, թէ բնաւ չէն լեալ իցէ»²²: Սա-

կայն դէպքի աւանդական թուագրմանը հակասում է Կեչառիսի այն վիմագրի մի տուեալը, որը փորագրուած է՝ «ժամատան երգիկի կամարի [հարաւահայեաց] գարնէզի վերայ»²³: Գաւթի երգիկի տակ՝ 7 մ բարձրութեան վրայ «կախուած» այդ վիմագիրը (որի որոշ տառեր մի վաղ նորոգման կրասուաղի տակ լոկ մօտիկից են «չօշափուում») մենք ստուգել ենք տեղում 2010 թ., եւ այստեղ եւս բերում ենք ամբողջութեամբ: Կամարի երկու շարք քարերի վրայի 6-տողանոց ծաւալուն բնագիրն ընթերցւում է հետեւեալ կերպ.

«Աւգնութեամբ Ամենայնսք Երրորդութե[ա]նն, ես՝ Ջալալ Հասան, որդի Վախտանգայ, որդոյ Մեծին Հասանայ, տէր / Խոյախան բերդոյ եւ Խաչնոյ, եւ ամուսին իմ Մամքան, դուստր Բաղաց թագաւորին, միաբանեցաք մեծ եւ հռչակաւոր սքք ուխտ/իս Կեչառուաց, եւ տուաք, յաւերման Նետողաց բազում զանձիւք վերստին նորոգեցաք, եւ տուաք յամէն ամի ի Հարաւո[յ]»²⁴ վաճառէն²⁵ Խ դաւկատ²⁶: / (ԹՎի

20 Դիւան հայ վիմագրութեան, ար. V, էջ 80, հ^տ 239:
 21 И. Орбели, в Асан Джалал, князь Хаченский, с. 154; Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչենի իշխանութիւնը, էջ 195-196:
 22 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի, Եր., 1961 (յետապա՛մ՝ Կիրակոս), գլ. ԽԴ, էջ 313 (գլխի վերնագիրն է «Վասն հարկահանացն, որ եկին ի դամէն», էջ 312): Բնագրում յիշատակուած բերդերի մասին մանրամասն տե՛ս Սլ. Սարգսեան, Խաչենի ամրոցները, Եր.-Ստեփանակերտ, 2002:

23 Տե՛ս Գ. կաթ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, Ամթիլիսա, 1969, էջ 168, 317: Հմմ. Յ. եպ. Ծախիսթունեանց Ծախիսթեցի, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, բաժանեալ յերկուս հատորս, հտ. Բ, Վաղարշապատ, 1842, էջ 195; Կ. Կոստանեանց, Վիմակաւ տարեգիր. Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 92; Է. Լ. Դանիէլեան, Գանձասարի պատմութիւն, Եր., 2005, էջ 128-129:
 24 Գ. Յովսէփեանը հրատարակել է յամարէն փխն. Հարաւո[յ]: Մշգրիտ ընթերցել է արդէն վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը (որին խորհրդատուութեան եւ իր վերծանութիւնը սիրալիրաբար տրամադրելու համար եւս մէկ անգամ յայտնում ենք մեր երախտագիտութիւնը): Այս «Հարաւ»-ը Գանձասարից 7-8 կմ արեւելք գտնուող Առաջածոր գիւղի արեւմտեան եզրի մանրատեղաւաններից է, ուր կայ սրբատեղի՝ աւերակ մատուռ (տե՛ս Գ. Մ. Սարգսեան, Արցախի վանքերն ու եկեղեցիները. Քարտեզ-արքւմ, Եր., 2014, նկար 19):

:ՈՂէ: [=1248 թ.]: Յառաջնորդութիւն Մխիթարեան վարդապետերս եւ այլ միաբանքս ընկալան եւ սահմանեցին մեզ: Բ: աւր պատարագ զամէն եկեղեց/իքս, զաւագ զատիկն ինձ եւ :Գ: շաբաթն աւրն Մամբանայ: Կատարիչք գրոյս ա՛բ հին յԱ՛սուծոյ, իսկ որ խափանէ՛ ի մերոց կամ յաւագ/աց կամ յիշխանաց եւ յառաջնորդաց, մեր մեղացս պարտական է եւ :ՅԺԸ: Հայրապետացն նզոված է: Կատարիչքն ա՛բ հին»: Վիմագրի երկրորդ տողի մեր կողմից ընդգծուած ԴՈՒՍՏՐ բառի մասին 2010 թ. մեր յօդուածում արդէն նշել ենք, որ տուեալ բնագրում այն յայտնուել է, թերեւս, իբրեւ «գրագէտ» փորագրողի անյաջող «նախաձեռնութիւնից» ծնուած վրիպակ. նրան տրուած «պատուիրաթղթում», անշուշտ, պիտի եղած լինէր ԹՈՒՆ, ինչպէս որ վերեւում մեր կողմից մատնանշուած մի քանի վիմագրերում է, բայց շարադասութիւնից շփոթուած փորագրողը մի իւրայատուկ «ուղղում» է կատարել իր բնագրում²⁷:

Մեզ հետաքրքրող տոհմաբանական խնդրի համար կարեւոր են նաեւ աղբիւ-

րագիտական համադիր քննութեամբ վերահանուող՝ 1261 թ. մոնղոլների ակնյայտաբար դաւադիր քաղաքականութեան հերթական շրջապտոյտին զոհ գնացած Հասան-Ջալալի միակ որդի Իւանէ Աթաբակի հետ կապուած նոր ճշգրտուած իրողութիւնները²⁸: Կիրակոս Գանձակեցին Իւանէ Աթաբակի մասին խօսում է նրա հօր նահատակութեան պահից սկսած եւ նշում միայն երկրորդ անունը (Աթաբակ). «Այսպէս կատարեցաւ այրն անարատ եւ աստուածապաշտ [Հասան-Ջալալ]՝ յընթացս կատարեալ եւ զհաւատան պահեալ յԶԺ թուականին Հայոց [=1261 թ.]: Եւ առաքեաց որդի նորա Աթաբակն [var. Աթապակն] արս հաւատարիմս եւ ետ գողանալ զնշխարս հօր իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք, զի պարսիկն, որ ի տան իւրում ունէր զնա ի կապանս... եցոյց խնդրողացն զմարմին նորա եւ պատմեաց զսքանչելի երեւումն: Եւ նոցա ժողովեալ խնդութեամբ եւ բարձեալ տարան զնա ի տուն իւր եւ թաղեցին ի վանքն Գանձասար, ի գերեզմանս հարց իւրոց... Եւ կալաւ զիշխանութիւն նորա Աթաբակն [var. Աթապակն]՝ որդի նորա, հրամանաւ Հուլաուին եւ Արղունին, այր սրբաանունդ, պարկեշտ եւ խոնարհամիտ եւ ազօթական, որպէս զմի ի սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»²⁹: Իսկ իր եղբրական մահուանից քիչ առաջ Աղուանից կաթողիկոսարանին նուիրաբերած Աւետարանի յիշատակարանում³⁰ Հասան Ջալալը յատուկ գրում էր իր միակ որդու մասին այսպէս. «Ե՛ս՝ Հասան Ջալալ

25 Վիմագրում բառը վրիպակով է՝ ՎՍԾԱՌԷՆ փխն. ՎԱԾԱՌԷՆ, որը բոլոր հրատարակիչներն իրաւացիօրէն սրբագրել են:

26 Հրատարակիչների մօտ՝ դուկատ է՝ փխն. դուկատ, որը ճշտել է արդէն Գ. Սարգսեանը: Երրորդ տողաւարտի այս բառից յետոյ նախադասութիւնը շարունակում է՝ ըստ ամենայնի, յաջորդ տողակազմում նախապէս գրուած թուականից յետոյ (դա նաեւ կամարի քարերի երկրորդ շարքի սկիզբն է): Թուականի բոլոր 6 տատերն էլ քիչ ատելի մեծ են: Նորից գնենք, որ փակագծով առանձնացնելու փոխարէն (ինչպէս արել ենք մենք), թուականը կարելի էր վերականգնել նաեւ բնագրի սկզբում:

27 Տե՛ս վերեւում, ծնթ. 18-20: Կրկնենք նաեւ, որ Կեչառիսում Հասան Ջալալի եւ իր կնոջ փառափելի նուիրատուութիւնը ինքնատուր չէ վերագրել մոնղոլների սկսած ծանրագոյն հալածանքներից անմիջապէս յաջորդող ժամանակին, ինչպէս արեւելքում, այդ հալածանքները (ուստի եւ՝ Խաչէն-Խօխանաբերդի կործանումը) կարող են թուագրուել 1248 թ. ոչ վաղ:

28 Հմմ. Ա. Յակոբան, *Խաչէն-Խօխանաբերդ սարոցք*, սն. 160-168:

29 Կիրակոս, գլ. ԿԳ, էջ 391-392:

30 Տե՛ս Ձեռ. ՄՄ հ^տ 378, թ. 8բ-9ա. Ի. Օրբելի, *Կասան Ժալալ, князь Хаченский*, с. 155-156; *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*. ԺԳ դար, Կազմեց Ա. Ս. Մարտոսեան, Եր., 1984, էջ 311:

Դաւլա³¹}, չոգա[յ] յարեւելս առ արքայն Նետողաց, եւ ի կողմն Հիւսիսոյ՝ տոհմիւ աղխաւորն իմով անձամբս վասն խաղաղութեան եկեղեցոյ: Ես եւ ամուսին իմ {Մամքան} եւ տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեւելս Հիւսիսոյ, եւ ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն, որ Մանգու խանն»³² (Թուի նշումը. «Ի թ[ո]ւիւն Հայոց ՉԺ [=1261 թ.] տուի գտուրբ Աւետարանս ծաղկազարդ, յիշատակ աստուածասէր տիկնոջն {Մամքանայ} ի մեր Լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգեւոր տէրն Ներսէս»³³), վերջին հատուածում. «եւ միոյ մանկանս իմոյ Իվանի Աթաբակին պարգեւէ՛ գքո գառատ ողորմութիւնը եւ գամենայն թշնամիս, որ ընկրկեալ սատակէ՛ եւ յամալթ արա՛»³⁴: Այսպիսով՝ Աթաբակ եւ Իվան[ե] Աթաբակ:

Սակայն Կոչիկ անապատի երեք կից միանաւ եկեղեցիներից համեմատաբար մեծի (հարաւայինի) մուտքի առջեւ՝ արեւմուտքից կցուած սրահի մէջ, ունենք մի մեծ, տափակ գերեզմանաքար, որի վրայ կայ հետեւեալ ուշագրաւ՝ 7 կարճ տողերով տապանագիրը. «Այս է հան/գիստ իշխան/

Խէրխաւան, / որոյն Հասանին, / թոռնն Բաղաց թագաւորին: / Թվին :ՉԼԵ: [=1286 թ.]»³⁵: Բնագրի այս՝ «Թոռնն Բաղաց թագաւորին» իւրայատուկ նշման շնորհիւ (մեր կողմից ընդգծուած) դժուար է նկատել, որ գրողի խօսքը կարող է վերաբերել միմիայն Հասան Զալալի «միոյ մանկանը» (որը, սակայն, կոչուած է մէկ այլ անունով՝ Խէրխաւան): Դա աւելի յստակ երեւում է նոյն եկեղեցու բեմի ճակատի ծաւալուն արձանագրութիւնից: Գրականութեան մէջ այդ վիճակը լաւ յայտնի է, բայց հիմնականում՝ շնորհիւ բնագրում յիշատակուած Մամիկոնեան իշխանների, ում անունները նշուած են նաեւ Զիկագոյի ծաղկազարդ Աւետարանի (1237 թ.) յետագայի մի յիշատակարանում³⁶ (Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում, բարեբախտաբար, կայ ձեռագրի մանրաժապաւէնը³⁷): Վերջինիս 2բ էջի՝ ներկայումս գրեթէ լրիւ մաշուած բոլորագրից ժԹ դարի հապշտապ շղագրով 19 տողով արտագրուած (Թ. Յա), ռամկաբանութիւններով հարուստ եւ դժուար ընթեռնելի, բայց ուշագիւր վերլուծելու դէպքում՝ գրեթէ ամբողջովին վերականգնուող բնագիրը հետեւեալն է.

«Յուս{ոյն Աստուծոյ} [10-12 տառ] ...ս{ոյ} / ու Մարծպանս, Մամիկոնս ընկ/ալաք Շիկալքարայ Աստուծոյ ծածինս, / որ էս որ առաջ եւ էլ մէզ ում{ոյ} չարկ/ից գէս եկեղեցիս ընդ խալանի / են արարել, արդ, մէք գէս խոստացաք / ու գՇիկալքարայ Աստուծոյ ծածինն ետ իւր / ամեանս հողովն թերխան արարաք. եւ տվին մե{ոյ}/զ սպասաւորք

31 Այս եւ յաջորդ, այսինքն՝ Հասան Զալալի եւ իր Մամքան տիկնոջ անունները ձեռագրում խնամքով քերտած են: Ըստ ամենայնի՝ դա արուել է՝ լոկ քերտածի տեղում պատուիրատուի համար այդ սիրելի անունները գունատր, ոսկեգոյն մեղանով կամ զարդաստեղով նկարելու համար, բայց դա էլ ինչ-որ պատճառով չի յաջողուել եւ մոռացուել է: Թերեւս, պատուիրատուն եղել է իրենց Իւան Աթաբակ որդին, ով իր անունն այդ տեղ համեատորէն թողել է չքերտած:

32 Տե՛ս Զեռ. ՄՄ 378, թ. 8բ-9ա. **И. Орбели**, *Կասան Դձալալ, князь Хаченский*, с. 155-156; Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար, Կազմեց **Ա. Ս. Մաթեոսեան**, Եր., 1984, էջ 311:

33 Տե՛ս Զեռ. ՄՄ հոմ 378, թ. 9ա:

34 Նոյն տեղում: «Դիւան հայ վիմագրութեան» պր. V-ում «Իւան Աթաբակ» անունը նշող վիմագրերն են՝ էջ 82, հոմ 245; էջ 116, հոմ 387. լոկ «Իւանէ» ձեռը կայ էջ 99, հոմ 315; էջ 100, հոմ 316. լոկ «Աթաբակ» էջ 24, հոմ 44; էջ 50, հոմ 122; էջ 51, հոմ 123, 125; էջ 52, հոմ 127; էջ 71, հոմ 208; էջ 72, հոմ 212:

35 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 29, հոմ 59: «Թոռն Բաղաց թագաւորին» արտայայտութեան մասին տե՛ս վերեւում եւ ստորեւ:

36 Տե՛ս **Յ. Քիրտեան**, *Չիքալոյի համալսարանին հայերէն ձեռագիրները*, – «Սիոն», 1971, թիւ 7-8, էջ 273-274; **A. K. Sanjian**, *A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States*, Los-Angeles – London, 1976, p. 234; Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար, էջ 905:

37 ՄՄ դրսի մանրաժապաւէններ, հոմ 612:

եկեղեցոյս Դ՛ աւր ժամ Զ{ատկ^[ո]}/ին, Ա՛ աւրն՝ հաւր մերոյ Հասանայ եւ {Ա^[ո]} / աւրն՝ եղբաւր մերոյ Սեւադէի եւ / Բ՛ աւրն՝ մաւր մերոյ Մամխաթուլին^[ո]}: / Արդ, թէ յիմոց կամ յաւտարաց, / կամ ելագ-գե[ա]ց գէս գիրս խափանել / ջանայ ու գէս եկեղեցիս էլ ընդ հարկիւ / անել ջանա[յ]՝ մեր ազգի ու տակի մեղաց / տէր եղէցի, մասն եւ բաժին ընդուն/եսցի եւ ընդ Արիոսիցն առցէ. / գրեցաւ գիրս ի թ՛վ-ին^[ո]... [6-8 տառ]}»: Բարեբախտաբար, թ. 15բ-ում նոյն բոլորագրով երկրորդ յիշատակարանի աւարտը չի կորցրել թուականի նշումը. «...եւ Ա^{ստուծ} զձեր / մեղս թողու իւր միւս անկամ գալըստ[ե]անն / յա^{ստուծ}ս. թ՛վ^ն Զ Ի՛ Դ՛ [=1275 թ.], / Հոռի ժ գրեցաւ»: Մանօթագրենք, որ Յարութիւն Քիւրտեանը չի կարողացել վերծանել Հոռի ամսանունը եւ նախորդող թուանշանները, այդ պատճառով ստացել է իրականութեան հետ ոչ մի կապ չունեցող «1461» թուականը³⁸: Արտաշէս Մաթեոսեանը բաց է թողել այս վերջին յիշատակարանը (Աւետիս Սանջեանը՝ նոյնպէս), ինչպէս նաեւ առաջինի աւարտը³⁹:

Ի դէպ, այս 1237 թ. ձեռագրի ստացողներ Գրիգոր եւ Վարդան քահանայ եղբայրների (Գերգ Փառաշի ու Շահանդուխտի որդիներ⁴⁰) յիշատակարանը (թ. 313ա-բ

բաց էջերում, «անցման երկաթագրով», միասին, ըստ ամենայնի՝ ինքնագիր. գրիչ-ծաղկողի էջերը երկսին են, ձեռագրերը՝ տարբեր) միջնամասում ունի մի կարեւոր հատուած (աջ եզրում մի քանի տառի չափով վնասուած), որն ուշադիր ընթերցմամբ վերծանուած է այսպէս. «յորս եմք տեղեկալ ի գլու[խս] / սահմանաց Խաչենոյ, ի ս^{սբ}բ ուխ[տս] / Գանձասար մենաստանէ, որ է [5-6 տառ]} / դրեկիսս Խաւխան ան[2-3 տառ]}խա[4-5 տառ]}/աջնորդու^թե^{սն} [5-6 տառ]}/տիս տ^{սն}ն Յո[5-6 տառ]}/դթ վարդ[5-6 տառ]} / ա^{ստուծ}ծարեալ [5-6 տառ]} //դ պսակ եկեղեցոյ Ք^թե^{ստուծ}ի»⁴¹: Յար. Քիւրտեանն այստեղ ընթերցել է. «...տեղակալ ի գլու(խ) սահմանաց Խաչենոյ, ի ս^{սբ}բ ուխ(տէն) Գանձասար մենաստան, որ ... Դրեկիս Սխրյազան հ... (առ)աջնորդութ(եան ս^{սբ}բ ուխ)տիս տ^{սն}ն Յո(վանիսի անյա)դթ վարդա(պետի) ա^{ստուծ}ծարեալ...»⁴², իսկ Աւ. Սանջեանը՝ «...ի գլու(խ) սահմանաց Խաչենոյ, ի ս^{սբ}բ ուխ(տէն) Գանձասար մենաստանէ, որ (է հանդէպ?) դրեկիս Սխրազան (Սխասղան?) Հ(աւքա)խա(ղաց), առաջնորդութ(եան ս^{սբ}բ ուխ)տիս տ^{սն}ն Յո(վահանիսի անյա)դթ վարդա(պետի եւ) ա^{ստուծ}ծարեալ...»⁴³: Գրեթէ նոյնն է Արտ. Մաթեո-

38 Յ. Քիւրտեան, *Չիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները*, էջ 274:

39 Նախորդ ընթերցումների միւս ոչ քիչ վրիպումներն անօգտակար ենք համարում նշել:

40 Հմմ. գրչութեան գրով թ. 313ա-ի յիշատակարանի վերջում. «Մաղթեմք ի յաւտելոց ի սմանէ՝ յիշեսչիք զվերագրեալքս ի Տ՛ր, նաեւ զանուսն զհարագատքս ուշիսն, եւ կարկառք մնամք աղաթից ձերոց, եւ զծնողս մեր զԳերգ Փառաշ եւ զԾահանդուխտ, եւ զայլ եղբարսս եւ զքորս, եւ զազգալիսն մեր. քանզի մեք՝ Գրիգոր եւ Վարդան որպէս զվտիտ եւ զընգար ամոլք ընգալաք զարարսս մշակին երկնաորի ազնականութեալն]քն Ք^{ստուծ}ի առ ի հերկեալ զակասս սրտից ա^{ստուծ}ծալանցոյ եւ սերմանելոյ զընդի զորեանս, որ յազելոցոյ էք ի Ք^{ստուծ}ի շա[հ]եականս պտղոյս: Յիշեսչիք զմեզ եւ զամենայն յամն արա-

րե[ա]լս {...} ի ձեզ, նաեւ զարբանեալ եղբարքս մեր {միաբան^ո}ակիցքս համարէն զծերսս եւ {...} զորդիացեալսս ս^{սբ}բ ուխ[տիս^ո ...} յիշեալ յիշիք ի Տ՛ր Յ^{ստուծ}ս {...} անարգ Ակար[ողս^ո ...} տես {... ...} մային եւ {... ...}տաղեց թ[վ]ին] ՈԶԶ [1237 թ.]: Տե՛ս *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 199 եւ հմմ. Յ. Քիւրտեան, *Չիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները*, էջ 276 (այստեղ թուականն անուշադիր է ընթերցում՝ «ՈԶԲ»); **A. K. Sanjian**, *A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States*, p. 233-234.

41 Հմմ. նախորդ ծանօթագրութեան մէջ յղուած էջերը:

42 Յ. Քիւրտեան, *Չիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները*, էջ 276:

43 **A. K. Sanjian**, *A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States*, p. 233.

սեանի մօտ⁴⁴: Բայց նշուած կարեւոր կտորի ճիշտ վերականգնումն է թւում հէնց՝ «...որ է {հանդէպ} / դղեկիսս իսախան ան{ուն} իսա{չէն, յառ}/աջնորդու^բե^{ան} (ս^{աբ}բ ուխ)-տիս...»: Նկատելի է, որ «Դղեկիսս» ձեւի նման՝ ստացական յօդը բնագրում չարաչահուած է ամենուր (օր.՝ յորս, վերոգրեալքն, զհարագատքն, եղբարսն, զծերսն, զորդիացեալսն):

Իսկ Կոչիկ անապատի բեմի ճակատի 12-տողանոց վիմագիրը ամբողջապէս հասկանալի է դառնում, երբ բաւականին պարզ բովանդակութեան վերլուծութեան շնորհիւ ճշտում ենք առաջին շարքի կէս քարակտորի տեղը՝ ոչ թէ պակասող քարերի սկզբնամասում, ինչպէս որ դա, նոր ժամանակներում պահպանուած դիրքից ելնելով, արել է Ս. Բարխուդարեանը (նրա ծանօթագրումն է. «Գրուած է երեք շարք քարերի վրայ. Ա շարքից մնացել են երկուսը՝ առաջին քարի [ուղղելի՛] նախավերջին – Ա. Յ.] կէս մասը եւ վերջին քարը. Բ շարքի չորս քարերից պակասում է վերջինը. Գ շարքի չորս քարերն էլ տեղում են: Արձանագրութիւնն այս վիճակում է եղել նաեւ Մ. Բարխուդարեանցի ժամանակ») ⁴⁵, այլ՝ վերջում: Այդ դէպքում բնագիրը վերականգնում է հետեւեալ ձեւով.

[1] {...[9-10 բառ, այդ թւում՝ թերեւս] ...ՀԱՍԱՆ՝ ՀԱՅՐՆ ԻՄ, ՄԻՆԱՅԻՆ, ՌԶՈՒՔԱՆ [6]} ԱՅ ԵՒ ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ, ԹՈՒՌՆ

44 Տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար, էջ 199: Կրկնէնք, որ մեր 2009 թ. գրքի էջ 250-ում, ցաւօք, լոկ անասել էինք այդ ընթերցումը:

45 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 29, հի^ս 58 (լուսանկարը՝ տախտ. VIII): Բարեբախտաբար, 2010 թ. մենք հնարարութիւն ենք ունեցել համեմատելու ասել Համլետ Պետրոսեանի՝ վերջերս արուած լուսանկարները (որի համար մեր երախտագիտութիւնն ենք յայտնում հետազօտողին): Ըստ դրանց՝ անկապումս եկեղեցու յատակին են ընկած ասել երկրորդ շարքի ճակատաքարերը:

[2] {ԲԱՂԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ [6]... [եւս 7-8 բառ, այդ թւում՝ թերեւս]...ԵՒ ՄԱՐԲ [6] ԻՄՈ} Վ :Գ: ՀԵՏԻ Ի ՂԱՆՆ ԳՆԱՅԻ ՅԱՐԵԻ-

[3] {ԵԼՍ ՀԻԻՍԻՍՈՅ [6]... [եւս 7-8 բառ] ...} ՔԻ Ի{ՆԶ [6]} ԻՄ ԱԶԳԷՆ ԹԱՓԵՑԻ Դ-

[4] ԱՏԱՍՏԱՆԱԻ: ԶԶՐԿԱՆՔՆ ՄԵՐ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՏՈ{ՂԱՅ... [եւս 6-7 բառ, այդ թւում՝ թերեւս]...ՄԵՔ՝ ՍԵՒԱ-ԴԱ [6]}

[5] ԽԷՐԻՍԱՆ, ՄԱՐԾՊԱՆ, ՄԱՄԻԿՈՆ ԿԱՄԵՅԱՔ ՆՈՐՈԳԵԼ ԶՄԵՐ ԳԵՐԵԶ-ՄԱՆԱՏՈՒՆՍ: ԵՍ՝ ԽԷՐԻՍԱՆՍ {...[2-3 բառ]... ՇԻՆ-}

[6] ԵՑԻ ԶՄ^{ԲԸ}Բ ՍՏԵՓԱՆՈՍՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻ՝ ՄԽԻԹԱՐՔ ԵՂԱՍԻՐ ԻՄՈ{Յ ԱՄՈՒՍՆՈՅՆ [6] ԱՍ-}

[7] ԹԷ{Ի}Ս՝ ՄԱՐՏԻՐՈՍԱ{Յ}: ԵՍ՝ ՍԵԻԱԴԱ ՏՎԻ ԶԳՐ{Ի}ԳՈՐԱՆԱՆՅ, ԶՄՌԸՆԴԱՆԱՆՅ, ԶԳԵԼՎԱՐԴԱՆՅ Ի Մ^{ԲԸ}Բ ԵԿԵՂԵՑԻՍ: {[2-3 բառ՝ թերեւս] ՄԻԱԲԱՆՔ ՏՈՒԻՆ [6] ՅԱ-}

[8] ՄՆ :Ժ: ԱԻՐ ԺԱՄ. :Բ{:}:՝ ՀԱՍԱՆԱ{Յ}՝ ԶԱՏԿԻՆ, :Բ:՝ ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ՝ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ, :Ա:՝ ՌԶՈՒ{ՔԱՆԱՅ, :Ա:՝ ՍԵՒԱԴԱՅԻՆ, [6]}

[9] :Բ:՝ ԽԷՐԻՍԱՆԻՆ՝ Յ{Ա}ՅՏՆՈՒԹԵ^{ԱՆ}ՅՆ, :Բ:՝ ԱՍԹԻՆ: ՈՐԶԱ{Փ ՈՐ ... [եւս 4-5 բառ] ...ԹՈՂ}

[10] ԿԱՏԱՐԵՆ: ՈՐ ՀԱԿԱՌԱԿԻ ԿԱՄ ԶՐԿԵԼ ԶԱՆԱՅ ԶԱՅՍ ՏԵՂԵՐՍ Ի Մ^{ԲԸ}Բ ԳԻՈՐԳԱՅ, ՈՍՈՒՆ ՆՈՐԱՅ Ա^ԸՏՈՒԾ ԵՂԻՑԻ՝

[11] ԵՒ ԻՆՔՆ ԶՐԿԵ{Ա}Լ ԼԻՑԻ՝ ՅԱԻԻՏԵՆԻՅ ՀԱՅՐԵՆԵ{Ա}ՅՆ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՅՆ՝ ՊԱՐՏԱՊԱՆ ԱՌԱՋԻ Ք^{ԲԸ}ՏՈՒ: ԳՐԵՅԱԻ ԳԻՐՍ

[12] Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ :ԶԺԴ: [=1265 թ.]:

Արդ, երկու բնագրերից երեւում է, որ Սեւադա, Մարծպան եւ Մամիկոն եղբայրները Կոչիկ անապատի շրջակայքի Մամիկոնեան իշխաններն էին, որոնց հայրը կոչուել է Հասան, իսկ մայրը՝ Մամախաթուն (յիշատակարանում՝ Մամխաթուն)։ Խաչէնում հաստատուած այդ Հասան Բ Մամիկոնեանը թոռն էր Դսեղի Բարձրաբաշ Ս. Գրիգոր վանքը 1221 թ. կառուցած Սարգիս Ա իշխանի եղբայր Հասան Սմբատեանի (նրանք երկու թոռներն էին տոհմի հիմնադիր համարուող Համագասպ-Մարծպանի)⁴⁶։ Մեր վիմագրի Խերխանը, որը հանդէս է գալիս իբրեւ վանքի ամենամեծ նուիրատուն, իսկ բնագրի սկզբում ներկայացնում է իր հայրական ընտանիքը եւ նշում մոնղոլ «ղանի» մօտ երեք անգամ («:Գ: հետի») գնալու մասին, եղել է ամուսինը բնագրում երկիցս յիշուած Ասթիի (այս անձնանունն այլ տարբերակներ են Ասթե, Սիթի, Սթե), ով էլ, ամենայն հավանականութեամբ, եղել է տեղի Մամիկոնեան տան իշխանադուստրը եւ ում հոգեւորական եղբայրը յիշուած է Մարտիրոս անունով։ Սթե (var. Ասթի) անունն էր կրում նաեւ Դսեղի իշխան Սարգիս Ա Մամիկոնեանի կինը⁴⁷։

Այսպիսով, երբ Կոչիկ անապատի վիմագրում վանքի գլխավոր նուիրատու Խէրխանն իր աներձագերի հետ միասին ասում է «նորոգել զմեր գերեզմանատունս», նա նկատի ունի, անշուշտ, այն «տունը», որտեղ ինքը ընդամենը փեսայ էր։ Մատուցուելիք պատարագների կտորում առաջինը նշուած Հասանը եւ Մամախաթունը, առաւել մեծ հաւանականութեամբ՝ Մամիկոնեան եղբայրների ծնողներն էին ըստ Զիկագոյի 1237 թ. Աւետարանի յետագայի յիշատակարանի (եթէ այդտեղ յիշուած լինէր, օրինակ, Հասան Զալալը, ապա սպասելի կը լինէր նաեւ նրա կնոջ՝ Մամքանի մասին նշումը)։ Խէրխան-Իւանէի քոյրերից երկու անգամ է նշուած միայն Ռ[ու]զուքանը. առաջին տողում պահպանուել է լոկ նրա անունն սեռական հոլովի «{...}ԱՅ» վերջաւորութիւնը (այդ պահանուած կտորի հիման վրայ Ս. Բարխուդարեանը շտապողաբար առաջարկում էր «{ՀԱՍԱՆ}ԱՅ» վերականգնումը⁴⁸, որը, սակայն, բովանդակութեան հաւանական կապ չի ստեղծում)։ Հնարաւոր չէ⁴⁹, արդեօք, դրանից ենթադրել, թէ նրա մոնղոլ ամուսինը վախճանուել էր 1261 թ. յետոյ (յիշենք Կիրակոս Գանձակեցու մօտ. «Իսկ դուստր Զալալին, Ռուզուքան անուն, որ կին լեալ էր Բաւրա-նուինին՝ որդոյ Զարմաղունին, առաջին գլխավորի թաթարին, գնաց առ Տաւղուս խաթունն՝ կին Հուլաւուին, զի թափեցէ զհայր իւր...»⁴⁹), եւ նա ամուսնացել էր Խաչէնի Մամիկոնեան եղբայրներից մէկի հետ։ Եթէ այո՛, ապա դա, աւելի մեծ հաւանականութեամբ, կարող էր լինել աւագ եղբայր Սեւադան, որի անունով է, թերեւս, մէկ պատարագ խոստացուել բնագրի Ց-րդ տողաւարտի կորած հատուածում՝ Ռզուքանի պատարագի նշումից յետոյ եւ Խէրխան ու Ասթի ամու-

46 Մանրամասն տե՛ս Յ. Քիրտեան, Դսեղի կամ Համագասպեան Մամիկոնեաններու տունը, – «Սիռն», 1970, ԲՊ 3-4, էջ 161; Այլմի՛ Նամակ խմբագրութեանը, – ԼՀԳ, 1971, ԲՊ 5, էջ 95; Գ. Սարգսեան, Նոր ցիւցեր Մամիկոնեան-Համագասպեան տան վերաբերեալ, – ԼՀԳ, 1979, ԲՊ 3, էջ 77-78 (ԲՄՄ. Այլմի՛ Բարձրաբաշ վանքը եւ նրա վիմագրութիւնը, – «Էջմիածին», 1951, ԲՊ Թ-Ժ, էջ 40-45, ԲՊ ԺԱ-ԺԲ, էջ 44-52); Ռ. Մաթեոսեան, Պոռեան ֆեոդալական տոհմի ծագումնաբանութիւնը, – ԼՀԳ, 1986, ԲՊ 11, էջ 68; Ս. Սարգսեան, Խաչէնի ամրոցները, էջ 87։

47 Յ. Քիրտեան, Նամակ խմբագրութեանը, էջ 94-95; Հմմ. Ասեւ Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, ԲՍ. Գ, էջ 491; Ս. Ա. Աւագեան, Ի յանգող անձնանունների սեռական, տրական ճողովների կազմութիւնը, էջ 129-166; Այլմի՛ վիմագրական պրպտումներ, Եր., 1986 (խմբ. Պ. Մ. Մուրադեան), էջ 194-196։

48 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 29։

49 Կիրակոս, գլ. ԿԳ, էջ 391։

սինների երկուական պատարագներից առաջ⁵⁰:

Իսկ ինչո՞ւ պէտք է Իւանէ եւ Աթաբալ անունները մանկուց կրող Խաչէնի իշխանն ընդունէր նաեւ երրորդ՝ Խէրխան անունը: Թւում է, թէ պէտք է ենթադրել, որ այս կամ այն չափով ինքնուրոյնութիւն դրսեւորող հայկական եւ վրացական ուժերի դէմ 1260-ական թթ. սկզբին կրկին ահազանցած մոնղոլական հալածանքները (որոնց զոհ գնացին Հասան Զալալը եւ ուրիշներ), հաւանաբար, ստիպել են դրանց թուլացման գործին լծուած Իւանէին (հմմ. «:Գ: հետի ի դանն գնացի», «զգրկանքն մեր ի ժամանակի նետո՛ղաց»», «[...] իմ ազգէն թափեցի դատաստանաւ»)՝ բռնատիրոջներին ներկայանալ մի աւելի յարմար, «մոնղոլանման» անունով: Ըստ Հր. Աճառեանի՝ երիցս ԺԳ դարում կիրառուած Խէրխան անունն ստուգաբանութեան մէջ յստակը հէնց խան/ղան թիւրքական բաղադրիչն է (հմմ. «կարելի է դնել հյ. խէր «հայր»+խան բառերից, այսինքն «նա՛ որի հայրը խան է, խանի որդի», ինչպէս կայ Խէրքէզ «բէգի որդի»)՝ Միւս հարցին՝ ինչո՞ւ պէտք է Հասան Զալալի որդի Իւանէ Խէրխանը թաղուէր ոչ թէ տոհմական գերեզմանատուն Գանձասարում, այլ Կոչիկ անապատում, շատ աւելի դժուար (եւ առայժմ՝ պարզապէս անհնար) է պատասխանել: Այն իրողութիւնը, որ Գանձասարի տարածքում նրա գերեզմանը չկայ, դեռ չի կարող հարցի սպառիչ պատասխանը հա-

մարուել: Այնտեղ գտնուած չեն նաեւ իր ծնողների եւ պապերից շատերի գերեզմանները, թէպէտ աղբիւրներից հաւաստիօրէն գիտենք, որ նրանք հէնց այնտեղ են թաղուել⁵²:

Այսպիսով, ամենայն հաւանականութեամբ, Կոչիկ անապատում թաղուած Խէրխան իշխանը նոյն ինքը՝ Հասան Զալալի եւ Մամբան Մամիկոնեան իշխանուհու որդի Իւանէ Աթաբալն է, այսինքն՝

52 Կրկնենք նաեւ, որ եթէ Հասան Զալալի որդի Իւանէ Աթաբալը (նրա ժառանգների ու յաջորդների մասին ԺԳ եւ հետագայ դարերում տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանությունը*, էջ 296-314; Գ. Ե. Կիրակոսեան, *Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թորքմէն ցեղերի արշաւանքների շրջանում /1386-1500 թթ./*, Եր., 1997, էջ 231-248) եւ Կոչիկ անապատի՝ «Բաղաց թագաւորի թոռ Հասանի» որդի Խէրխանը նոյնն են, ապա մենք պետք է ընտրենք Խաչէնի այդ իշխանի մահուան տարեթուի ճիշտ տարբերակը: Տապանագրի :ՁԼԵ: թուականը (= 9.01.1286-8.01.1287 թթ.) համարդեով Ստեփաննոս եպիսկոպոսի (Օրբէլեանի) հաղորդած թուերի հետ (ՌՄԶԹ/1289 [-2] կամ ՁԼԶ/736 [+551] = 1287 թ., իսկ ամբողջական աղիսակալին բնագիրն է. «ՌՄԶԹ. // Ձմեռն խիստ եղեւ: Մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աթաբալ, որդի Զալալի, եւ Հասան, թոռն Դաւիթի, եւ ապա մեռաւ Ծարն ի Տիփսիս: // ՁԼԶ [=9.01.1287-8.01.1288 թթ.]. տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հտ. Ա, Կագմեց Վ. Ա. Յակոբեան, Եր., 1951, էջ 48), թում է, թէ կարելի է համոզուել, որ ո՛չ ճշգրիտ, այլ մօտաւոր պետք է դիտուի հէնց վերջին աղբիւրի նշումը: Քանի որ այդտեղ աւուր է տուեալ տարուայ «ձմեռանը» երեք անձանց վախճանի մասին, ապա նրանցից մէկնումէկի հարցում հեղինակն իր շարադրանքի բովում կարող էր նաեւ «կորացնել». այնինչ հայկական տապանագրերը, կարծես թէ անանց բացատրութեան, արձանագրում են հանգուցեալի մահուան հէնց ճշգրիտ տարին: Նկատենք նաեւ, որ Հայոց ՁԼԶ – 736 թուականի (որը տեւել է 1287 թ. Յունուարի 9-ից մինչեւ 1288 թ. Յունուարի 8-ը (տե՛ս Հ. Ա. Բաղալեան, *Օրացոյցի պատմություն*, Եր., 1970, էջ 375) առաջին ձմեռն սկսուել էր դեռ նախորդ՝ 1286 թ. Դեկտեմբերով: Ըստ այսմ՝ Իւանէ Աթաբալ Խէրխան իշխանի մահուան իրական ժամանակը՝ մեծ հաւանականութեամբ, կարող է վերագրուել կա՛մ 1286 թ. Դեկտեմբեր ամսին, կա՛մ, որպէս էլ աւելի «հաշտեցուցիչ» տարբերակ՝ 1287 թ. Յունուարի առաջին ութ օրերին:

50 Ըստ Ս. Բարխուդարեանի՝ Հասան Զալալի այս Ռուգուքան դատեր մասին է նաեւ Գանձասարի գաւթի կամարների յենակ արեւելեան որմնամույթի խոյակի վերեւի 2 ստղը. «Ռուգուքան/ին է խաչ[ս]» (*Դիւան հայ վիմագրութեան*, սր. V, էջ 61, Բ⁵⁰ 162): Իսկ նրա քոյրերի՝ Ումեկի երկրորդ կինը դարձած Մամախաթունի եւ Տարսալիճի կին Միւսայի մասին ողջ միւթը տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանությունը*, էջ 220-229:

51 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, էջ 510-511:

թողը մի՛ կողմից Բաղաց թագաւոր Հասան Կրօնաւորեալի որդու, իսկ մի՛ւս կողմից՝ Դսեղի Մամիկոնեան իշխան Ասլանբէկի:

Մեր նոր պրպտումների արդիւնքում կարող ենք պնդել, որ Դսեղի իշխան Ասլանբէկ-Ասլան Մամիկոնեանն ուղիղ ձեւով Իւանէ Աթաբակի մայր Մամքանի հայր է կոչուած Առաջածորի հսկայ ժայռաբեկորի վիմագրում: Վերջինս ամենից ուշադիր ընթերցել է Խաչիկ վրդ. Դադեանը⁵³ (ցաւօք, մենք չենք կարողացել ստուգել վիմագիրը տեղում, թէպէտ, փոխարէնը՝ ձեռքի տակ ունեցել ենք մեր հնագէտ գործընկեր Գագիկ Սարգսեանի կողմից վերջերս արուած լուսանկարները, որի համար յայտնում ենք նրան մեր մեծ երախտագիտութիւնը): Կրճատումներով բերում ենք գիտնական-վարդապետի փոքրիկ յօդուածի մի կտորը (ընդգծումը մերն է – Ա. Յ.)⁵⁴. «...Խաչենու Առաջածոր գիւղի ճապին ձորի քարաժայռի արձանագրութիւնն է: Տարաբաղդաբար Գեր. Մակար եպիսկոպոսի – Արցախ աշխատութեան մէջ միանգամայն աղաւաղուած է: Տե՛ս Արցախ, եր. 288-289: ... Քարաժայռի հիւսիսարեւմտեան գրութիւնն է. «Յորժամ նկարեցան / Հգարահանքս թիւն .ՈՂԸ. էր: Տէր Խաչինոյ Զալալ»: ... Հարաւ-արեւելեան ճակատի գրութիւնը՝ «Որս յարքայ Զալալէ Դաւլայ եւ Աթաբակ որդի նորայ իշխան Խաչինոյ / և Ըռանայ ուքան մանուկն Հասանայ⁵⁵ սաղար^օ գոլած ու⁵⁶ մեծ փաթշայ⁵⁷

Ասլան պարոն հա/յր Մամքանայ սիրով ի սմայ այլ մեծամեծք իշխանք եւ զաւրք նոցայ միայ/համուռ համակից միմեանց աւրհնեալ եւ զաւրացեալ եղիցին ի կամս Աստուծոյ...»: Նշենք, որ Սեղրակ Բարխուդարեանը եւս վերծանել է այս բաւական բարդ դիտարկելի արձանագրութիւնը: Ըստ ամենայնի՝ նա արել է դա հապճեպ (ընդ որում՝ առանց լուսանկար տեղադրելու) եւ այդ պահին ձեռքին ունենալով միայն Մակար Բարխուդարեանցի ընթերցումը (թէպէտ «Դիւանում» յղում է տալիս նաեւ Խ. Դադեանի յօդուածին)⁵⁸: Այդ պատճառով նրա վերծանած «Ավան պարոն հայր Միրանայ»-ի փոխարէն, անշուշտ, պիտի գերադասելի համարուի Խ. Դադեանի՝ «ԱՍԼԱՆ ՊԱՐՈՆ՝ ՀԱՅՐ ՄԱՍՔԱՆԱՅ» բնագիրը, որը բաւականին յստակ ընթերցում է նաեւ լուսանկարում: Առաջին դէպքում պատճառը ՍԼ տառերի՝ բաւական լաւ երեւացող կցագրումն է ԱՍ-ԼԱՆ բառի մէջ (հմմ. մեր յօդուածի վերջում դրուած երկրորդ գրչանկարը):

Առաջածորի ժայռաբեկորի վիմագրի հատուածներից մէկի ուշադիր դիտարկումից կարելի է կատարել եւս մի կարեւոր (թէպէտ, միեւնոյն է՝ վարկածային) եզրայանգում Մամքան իշխանուհու հէնց այս տեղում թաղուած լինելու մասին: Այդ հատուածը ժայռաբեկորի հարաւ-արեւմտեան կողի ներքեւի ձախ անկիւնում է, եւ Խ. Դադեանի կողմից ընկալուել է իբրեւ տուեալ կողմի վերջին երեք՝ 8-10-րդ տողեր: Սակայն նախորդ՝ 3-7-րդ տողերից (բնագիրը՝ «ՏԵՐ ԵՂԻԱՅ ՇԻՆԵՅ ԶՄԹԸԲ ԱՆԱՊԱՏՍ ... ԱՅԼ ԱԻՐՉՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ ՄԻԱԲԱՆ») այն բաժանուած է կրկնաչրջանագծի մէջ ոճաւորուած հաւասարաթեւ

53 Խ. Վ., Առան երկիր կամ աշխարհ, – «Արարատ», 1896, էջ 233-234:
 54 Նոյն էջերում:
 55 Թերեւս, «մանուկն Հասանայ»-ից սուսջ պիտի ընկալել՝ «Ըռանայ ու քան», իմա՝ «եւ դեռ անելի»:
 56 Լուսանկարում երեւում է ոչ թէ «սաղար գոլած [«Դիւան»-ում՝ «պլած?】 ու», այլ ՍԱՂԱՊԱՊԱՏՄ ԱՌԻ (իմա՝ «սաղա՛մ ապրած սո», որ Աթաբակն է):
 57 Լուսանկարից անելի շատ ընթերցում է ոչ թէ «փաթշայ», այլ ՓԱՌՇԱՅ (կամ գուցէ եւ՝ ՓԱՌՇԱՅ), որը, թերեւս, սեռական հոլովն է «փառաշ» տիտղոսի կամ պաշտօնի (հմմ. վերելում, ծնթ. 40՝ «Գերգ Փառաշ»): Պարսկերէն այն նշանա-

կում է «ուանկ», «կարող», «վարիչ» (Персидско-русский словарь, В 2-х томах. Под ред. Ю. А. Рубинчика, т. II, Москва, 1970, с. 225).
 58 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 87-89, ր^օ 268:

խաչի պատկերով եւ, ի տարբերութիւն նրանց, չունի տողատման գծեր (Հմմ. մեր յօդուածի վերջում դրուած լուսանկարը): Ի դէպ, այդպիսի գծերով են օժտուած նաեւ նոյն կողի ամենավերելի (ՏՒՐ ԵՂԻԱՅ-ի գրառումից 5 մեծ եւ 4 փոքր խաչերով բաժանուած) 1-2-րդ տողերը (բնագիրն է. «ԳՐԵՑԱՆ, ՆԿԱՐԵՑԱՆ, ԿԱՏԱՐԵՑԱՆ ... ԲԱՐԵՆԱԻՍ ՀՈԳՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ Ի ՊԱՐԾԱՆՍ»), ինչպէս նաեւ հարաւ-արեւելեան կողի 10 տողերը (բնագիրն է. «ՈՐ ԱՍՏՈՒՅՈՅ՝ ԱՐՔԱՅ ԶԱԼԱԼՍ՝⁵⁹ ԴԱԻԼԱՅ ԵՒ ԱԹԱԲԱԿ ՈՐԴԻՆ ՆՈՐԱՅ, ԻՇՆԱՆ ԽԱՉԻՆՈՅ / Լ ԸՌԱՆԱՅ ՈՒ ՔԱՆ ... ՏԱՅԷ ԱՍՏՈՒՅ ԶԲԱՐԵՄՏՈՒԹԻՒՆ / ՀՈԳՈՅ Լ ՄԱՐՄՆՈՅ ԻՐԱՅՆ՝ ... ԱՄԷՆ»): Մեզ հետաքրքրող երեք տողերից առաջինը շեղութեամբ իջնում է ժայռաբեկորի եզրին զուգահեռ գծով եւ ուղղում հաւասարաթեւ խաչի տակ, իսկ միւս երկու տողերը փորագրուած են միայն առաջինի ուղղուած կէսի տակ: Բնագիրն է.

ՄԱՅՐ ՏԵՆԵՆ, ՈՂՈՐՄԵԱՅ ՄԱԻՐՆ ԻՄ՝ ՅՈՒՍԱՅԵԱԼ Ի ՄԻԱԾԻՆԴ ԲՈ, ԼՈՒՍՍԱՐԵԱՅ ԸՆԴ ՄՈՒՐԱՍ ԲՈ:

59 Այս «ՈՐ ԱՍՏՈՒՅՈՅ ԱՐՔԱՅ ԶԱԼԱԼՍ» ընթերցում-վերծանումը մերն է՝ ըստ լուսանկարի եւ մասամբ՝ Մակար Բարխուդարեանցի (հմմ. Արցախ, էջ 189):


Թուում է, թէ սա Իւանէ Աթաբակի իւրօրինակ որդիական մաղթանքն է, ով մի ահաւոր ծանր քաղաքական պահի (երբ հայրը բանտարկուած էր Թաւրիզում ու սպասում էր իր՝ ուխտադրուժ մոնղոլ իշխանաւորների պարագայում անխուսափելի մահկանացուին), ստիպուած է եղել թաղել իր վաղամեռիկ բարեպաշտուհի մօրն այս ժայռի տակ եւ թողնել նման համեստ տապանագիր՝ անգամ առանց հանգուցեալի անուան յիշատակման: Նշենք, որ հէնց ժայռաբեկորի մօտ ընկած է միջին չափերի մի խաչքարանման տապանաքար՝ բարձրաքանդակ, բայց անշուք մշակուած մեծ խաչապատկերով, որը ենթադրաբար կարող է լինել Մամբան իշխանուհու գերեզմանաքարը:

Յաւելենք, որ յիրաւի երանելի Մամբան Մամիկոնեան բարեպաշտուհի իշխանուհին եւ իր հայր Ասլանբէկ Մամիկոնեան-Համազասպեանը ինչ-որ իւրայատուկ կապերով են կապուած եղել Գանձասարի վանքից արեւելք ընկած այս գիւղախմբին, որտեղ ցայսօր յիշուում է նաեւ Մամբան եկեղեցին կամ Մամբաեղցին⁶⁰:

60 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 83 («ՄԱՄՔԱԵՂՑՈՒՅ ՌԻՍԻՍԱՐԵԻԷՆՔ, գետակի միւս ափին...»; «ՄԱՄՔԱԵՂՑՈՒՅ ՂԷՍԻ ՎԱՆՔ ՓԻՆՆ տանող ճամփին...»); Ս. Մկրտչյան, *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха*, Ер., 1988, с. 24 («Церковь Манка (правильнее – Мамакан, по имени княгини Хачена) в Цмак-охе...», նոյն տե՛ս նաեւ Ս. Մկրտչյան, *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха* /Второе издание/, Ер., 1989, с. 24); Գ. Մ. Սարգսեան, *Արցախի վանքերն ու եկեղեցիները*. Քարտէզ-պրոմ, նկար 128 («Ծմ-2, գ. Ծմակահող, Մարտակերտի շրջան, Եկեղեցի «Մամբան», հս. եզրին, 12-13-րդ դդ., կանգուն, խարխլում: Կորդինատները՝ N. 40 03 45,4, E. 46 35 02,2, Alt. 1108»):



Առաջածորի արձանագրութեան փարը
(լուսանկարը՝ Գագիկ Սարգսեանի)



Առաջածորի արձանագրութեան գրչանկարը
(հեղինակ՝ Սամուէլ Կարապետեան)